



## ԱՊՐԱՆՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

### ՄԻԿԱ ՍԱՀՐԱԴՅԱՆ

ՀՊՏՀ կոմերցիայի և քիզնեսի ամբիոնի պրոֆեսոր,  
տեխնիկական գիտությունների դոկտոր

### ԱՆՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱԱՀ ասավիրանու

### ՌՈՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԵՊՀ անօրգանական և անալիտիկ քիմիայի ամբիոնի պրոֆեսոր,  
քիմիական գիտությունների դոկտոր

## ԽԱՂՈՂԻ ԱՆԱՊԱԿ ԳԻՆԻՆԵՐԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՅԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄԸ ԲՆԱԿԱՆ ՆՈՐ ՍՈՐԲԵՏՈՎԿ

Ուսումնասիրվել է խաղողի անապակ պղտոր գինենյութերի որակի, անվտանգության և կայունության վրա խիտողանի, դիաստոմիտի և «դիաստոմիտ + խիտողան» համակարգի ազդեցությունը: Պարզվել է, որ բնական պոլիմեր խիտողանը, օժտված լինելով բարձր սորբցիոն և մանրէասպան հատկությամբ, նվազեցնում է պղտոր գինենյութերի պղտորությունը, թունավոր տարրերից կապարի և կադմիումի քանակները և բակտերիաներով վարակվածությունը՝ չփոփոխելով դրանց զգայորոշման հատկանիշները: Մանրէաբանական հետազոտության արդյունքները վկայում են, որ մանրէասպան բարձր հատկությամբ օժտված խիտողանով մշակման դեպքում գինենյութերի մեջ նվազում է բակտերիաների քանակը, որի շնորհիվ բարձրանում է գինու կայունության աստիճանը: Խիտողանը դիաստոմիտի համեմատությամբ առավելություն ունի. այն կարելի է օգտագործել որպես պղտոր գինենյութերի պարզեցման, որակի և կայունության ապահովման միջոց: Քանի որ խիտողանը թանկ է դիաստոմիտից, ուստի գինեգործության ոլորտում առավել արդյունավետ է «դիաստոմիտ+խիտողան» համակարգի կիրառումը:

**Հիմնաբառեր.** պղտոր գինի, խիտողան, դիաստոմիտ, որակ, անվտանգություն, կայունություն

JEL : Y8, Y80, Y9

Գոյություն ունեն գինիների կայունության աստիճանի բարձրացման միշտը դասական եղանակներ՝ ծծմբային թթվով, ցածր և բարձր ջերմաստիճանային, տարբեր քիմիական նյութերով, տեխնոլոգիական ռեժիմներով մշակման եղանակներ<sup>1</sup>, սակայն գինու մշակման յուրաքանչյուր եղանակն այս կամ այն ձևով ազդում է գինիների որակի, կայունության և անվտանգության վրա:

Ներկայում աձում է հետաքրքրությունը բնական կայունացուցիչների նկատմամբ: Լինելով բուսական ծագման պոլիմեր՝ խիտողանն ունի բարձր կենսաբանական ակտիվություն և համարվում է լավ սորբենտ<sup>2</sup>: Մենք ուսումնասիրել ենք տարբեր սորբենտների՝ մասնավորապես խիտողանի ազդեցությունը խաղողի սեղանի անապակ գինիների որակի, անվտանգության և կայունության վրա՝ դրանց ապահովման և տեխնոլոգիայի կատարելագործման նպատակով:

Հետազոտության օբյեկտ են դարձել «Ուկածիթելի» խաղողատեսակից Երևանի շամպայն գինիների գործարանի պատրաստած «Ֆրանս» սեղանի անապակ սպիտակ և «Հաղթանակ» խաղողատեսակից՝ «Հողի արյուն» սեղանի անապակ կարմիր պղտոր գինենյութերը:

Որպես կայունացուցիչներ կիրառվել են՝ «Բնօպրոցես» 230 000 մոլեկուլար զանգվածով խիտողանի փոշին (ՏԿ 289-001 44166258-98), որի դեպքում խիտողանի հակարիոտիկ հատկությունները բավական ընդգծված են, ՀՀ Զքաձորի հանքավայրում ջերմաքիմիական և մեխանիկական վերամշակման ճանապարհով ստացված «Մասիս» դիաստոմիտի գտող փոշին ISO9001-2000 (81873231054) և «դիաստոմիտ+խիտողան» համակարգը:

Հետազոտություններն իրականացվել են ՀՊՏՀ, ԵՊՀ և Երևանի շամպայն գինիների գործարանի լաբորատորիաներում գինեգործության ոլորտում կիրառվող հանրաճանաչ մեթոդներով: Փորձերը կատարվել են 3–5 կրկնությամբ:

Կայունացուցիչների ազդեցությունը պարզելու նպատակով դրանցով մշակումից առաջ և հետո որոշվել են գինենյութերի նորմատիվային փաստաթթերով նորմավորվող և չնորմավորվող ցուցանիշները:

Կշռվել է տարբեր քանակի սորբենտ՝ 1.0, 1.5 և 4.5 գ «Մասիս» դիաստոմիտ, լցվել 200 մլ-անոց կոլրի մեջ և յուրաքանչյուրին ավելացվել է 75 մլ պղտոր, չմշակված գինենյութը: Ստացված խառնուրդները 30 րոպե մազմիսական խառնիչով խառնելուց հետո ֆիլտրվել են ֆիլտրի թղթով, և դիաստոմիտով մշակված նմուշները համեմատվել են ստուգիչ նմուշների հետ: Նմուշների պղտորությունը որոշվել է ԿՓԿ-2-ՍԽԼ մակնիշի ֆուտուեկտրոլուրիմետրի օգնությամբ՝ կարմիր գինենյութի դեպքում օգտագործելով  $I=0.5$  սմ, սպիտակ գինենյութի դեպքում՝  $I=5$  սմ հաստության լցուվելու, ալիքի երկարությունը կարմիր գինենյութի դեպքում  $n=540$  նմ է, սպիտակի դեպքում՝  $n=364$  նմ (այսուսակ 1): Նույնկերպ կշռվել է 0.5, 0.75 և 1.0 գ խիտողանի փոշին, լցվել 200 մլ-անոց կոլրի մեջ, և յուրաքանչյուր նմուշին ավելացվել է

<sup>1</sup>Տես Վալյիկո Գ.Ի., Զինченко Վ.Ի., Մեխուզլա Հ.Ա., Стабилизация виноградных вин. Симферополь, “Таврида”, 2002. Սամվելյան Ա.Մ., К вопросам улучшения качества виноградных вин. Дис. на д. тех. наук., Тбилиси, 1974. Ռիբերո-Գայօն Ժ., Պեյնո Է., Ծյոծր Պ., Теория и практика виноделия. М., 1981. Էնելաշվիլի Հ.Վ., Влияние термической обработки мезги на фенольные вещества крепленых розовых вин // Виноделие и виноградарство, № 5, 2005.

<sup>2</sup>Տես Հյանիկովա Գ.Ի., Մամետնաբիև Տ.Յ., Новый сорбент для вин. “Ликероводочное производство и виноделие”, № 8, 2005.

75 մլ պղտոր, չմշակված գինենյութ: Մնացած մշակումը կատարվել է նույն ձևով (աղյուսակ 2): «Խիտոզան + դիաստոմիտ» համակարգի դեպքում կշռվել է 1.5 գ, 1.5 գ, 1.5 գ և 1.5 գ դիաստոմիտ, ու 0.15 գ, 0.25 գ, 0.5 գ և 0.75 գ խիտոզան լցվել է 200 մլ-անոց կոնածև կոլբի մեջ, յուրաքանչյուրին ավելացվել է 75 մլ պղտոր չմշակված գինենյութ: Մնացած մշակումը կատարվել է նույն ձևով:

### Հետազոտության արդյունք

Գինեների որակի և անվտանգության ուսումնասիրման նպատակով իրականացվել է «Ֆրանս» սպիտակ և «Հողի արյուն» կարմիր սեղանի անապակ ստանդարտային գինենյութերի որակի գգայորոշման փորձաքննություն, այնուհետև իրականացվել է որակի գնահատում 10-միավորային համակարգով. նույներից առաջինը ստացել է 7.25, երկրորդը՝ 7.0 միավոր:

Կախված հետազոտվող սորբենտների՝ խիտոզան + գինենյութ, դիաստոմիտ + գինենյութ, «Խիտոզան + դիաստոմիտ» համակարգ + գինենյութ քանակական հարաբերակցությունից՝ որոշվել են բոլոր նույների պղտորությունը, ակտիվ թթվությունը (pH), նորմատիվային փաստաթղթերով նորմավորվող ֆիզիկաքիմիական և անվտանգության ցուցանիշները նույն ձևով (աղյուսակ 1):

Աղյուսակ 1-ում ներկայացված են տարբեր սորբենտների՝ «Բնօրոցրես» խիտոզանով, «Մասիս» դիաստոմիտով և «Խիտոզան + դիաստոմիտ» համակարգով մշակված «Ֆրանս» պղտոր սեղանի անապակ սպիտակ և «Հողի արյուն» կարմիր պղտոր գինենյութերի պղտորության արդյունքները՝ պայմանավորված սորբենտների և գինենյութերի քանակական հարաբերակցությամբ:

### Աղյուսակ 1

#### Սպիտակ անապակ և կարմիր անապակ գինենյութերի օպտիկական խտության /D/ փոփոխությունը՝ կախված սորբենտի տեսակից և քանակից

	Սորբենտ		Սպիտակ պղտոր գինենյութ		Կարմիր պղտոր գինենյութ	
	տեսակը	քանակը	D	</D	D	</D
1	ստուգիչ նմուշ	--	0.80	--	1.20	--
2	խիտոզան	0,2	0,68	0,12	1,0	0,2
		0,4	0,54	0,26	0,9	0,3
		1,0	0,31	0,49	0,8	0,4
		2,0	0,28	0,52	0,56	0,64
3	դիաստոմիտ	1.3	0,7	0,1	1,1	0,1
		2,0	0,64	0,16	1,0	0,2
		6,0	0,67	0,13	0,9	0,3
4.	«Խիտոզան + դիաստոմիտ» համակարգ	խիտոզան	դիաստոմիտ			
		0,2	2,0	0,80	0	1,10
		0,33	2,0	0,70	0,10	1,00
		0,66	2,0	0,58	0,22	0,80
		1,0	2,0	0,36	0,44	0,90

Ըստ աղյուսակի տվյալների՝ խիտոզանի 0,2–2,0 գ/100 մլ կոնցենտրացիաներով մշակված «Ֆրանս» սեղանի անապակ սպիտակ պղտոր գինենյութի ստուգիչ նմուշի պղտորությունը, կախված խիտոզանի կոնցենտրացիայից, իջել է 0,12–0,52-ով, այսինքն՝ 1,2–2,9 անգամ՝ ստուգիչ նմուշի համեմատությամբ: Նույն գինենյութի՝ դիաստոմիտի 1.3–6.0 գ/100մլ կոնցենտրացիաներով մշակման դեպքում պղտորությունը, կախված դիաստոմիտի կոն-

ցենտրացիայից, իջել է 0,1–0,2-ով, այսինքն՝ 1,1–1,2 անգամ՝ ստուգիչ նմուշի համեմատությամբ, իսկ խիտողան և դիատոմիտ սորբենտների տարբեր հարաբերակցության «խիտողան+դիատոմիտ» համակարգով սպիտակ գինենյութի մշակման դեպքում պղտորությունը իջել է 0,10–0,44-ով, այսինքն՝ 1,1–2,2 անգամ՝ ստուգիչի համեմատությամբ:

Նույնանման արդյունք է գրանցվել «Հողի արյուն» սեղանի անապակ կարմիր պղտոր գինենյութերը վերոհիշյալ սորբենտներով մշակման դեպքում: Աղյուսակ 1-ի տվյալները ցույց են տալիս նաև, որ խիտողանի 0,2–2,0 գ/100 մլ կոնցենտրացիաներով մշակված կարմիր պղտոր անապակ գինենյութի պղտորությունը իջել է 0,2–0,6-ով կամ 1,2–2,1 անգամ, դիատոմիտի 1,3–6,0 գ/100 մլ կոնցենտրացիաներով մշակման դեպքում պղտորությունը, կախված դիատոմիտի կոնցենտրացիայից, իջել է 0,1–0,3-ով, այսինքն՝ 1,1–1,3 անգամ՝ ստուգիչ նմուշի համեմատությամբ, իսկ խիտողան և դիատոմիտ սորբենտների քանակական տարբեր հարաբերակցության «խիտողան+դիատոմիտ» համակարգով սպիտակ գինենյութի մշակման դեպքում «Հողի արյունի» պղտորությունը իջել է 0,10–0,4-ով, այսինքն՝ 1,1–1,5 անգամ՝ ստուգիչի համեմատությամբ:

Գինեների կայունության վրա էապես ազդում է ակտիվ թթվությունը: Գինու բյուրեղային պղտորումները պայմանավորված են գինու մեջ իոնային հավասարակշռության խախտմամբ: Բացի կատիոնների և անիոնների կոնցենտրացիաներից, գինու սպիտայնությունից, ջերմաստիճանից, հավասարակշռական վիճակը կախված է րH-ի մեծությունից: Ակտիվ թթվությունը ստանդարտով չնորմավորվող ցուցանիշ է, որը սովորաբար գինեներում տատանվում է րH 2,5–3,7 սահմաններում: Այն ազդում է գինենյութերի և գինու համային հատկանիշների և կայունության վրա<sup>3</sup>: Ուսումնասիրվել է սորբենտների ազդեցությունը սեղանի անապակ սպիտակ և կարմիր պղտոր գինենյութերի ակտիվ թթվության վրա փոփոխությունը, կախված խիտողանի, դիատոմիտի և «խիտողան + դիատոմիտ» համակարգի քանակից:

Սեղանի անապակ սպիտակ և կարմիր պղտոր գինենյութերի ակտիվ թթվության փոփոխությունը, կախված սորբենտների՝ խիտողանի, դիատոմիտի և «խիտողան + դիատոմիտ» համակարգի և գինենյութերի քանակական հարաբերակցությունից, ներկայացված է 2-րդ և 3-րդ աղյուսակներում:

## Աղյուսակ 2

**Սպիտակ գինենյութի ակտիվ թթվության փոփոխությունը՝ կախված խիտողանի, դիատոմիտի և «խիտողան+դիատոմիտ» համակարգի քանակից**

Նմուշ	Սորբենտ, համապատասխան րH						
	Խիտողան (գ/100 մլ)	рH	Դիատոմիտ (գ/100 մլ)	рH	«Խիտողան+դիատոմիտ» (գ/100 մլ) Խիտողան Դիատոմիտ	рH	
1	0.2	3.60	1.3	3.69	0.20	2.0	3.60
2	0.4	3.67	2.0	3.47	0.30	2.0	3.66
3	1.0	4.57	6.0	3.46	0.66	2.0	3.80
4	2.0	5.20	7.0	3.45	1.00	2.0	4.21
Ստուգիչ (պղտոր)	-	3.45		3.45			3.45

Ինչպես երևում է աղյուսակ 2-ից, խիտողանի քանակի ավելացմանը զուգընթաց, սեղանի անապակ սպիտակ գինենյութերի րH-ը փոքր-ինչ բարձ-

<sup>3</sup> Տե՛ս Վալյիկո Գ.Գ., Զինչենկո Յ.Ի., Մեխոզլա Հ.Ա., նշվ. աշխ.:

րանում է. 1.12-ով՝ խիտողանի 1,0 գ/100 մլ քանակի դեպքում, pH 1.75-ով՝ խիտողանի 2,0 գ/100 մլ քանակի դեպքում՝ սոուզիչի համեմատությամբ, մինչդեռ «խիտողան 0.3 գ + դիատոմիտ 2.0 գ» համակարգով մշակման դեպքում pH-ը բարձրանում է ընդհամենք 0.21-ով՝ սոուզիչի համեմատությամբև մնում է pH 2,5-3,7 սահմաններում:

Աղյուսակ 3

**Կարմիր գինենյութի ալյուտիվ թթվության փոփոխությունը՝ կախված կիրառվող սորբենստների քանակներից**

Նմուշ	Խիստո- զան (գ/100 մլ)	pH	Սորբեն, համապատասխան pH				pH
			Դիա- տոմիտ (գ/100 մլ)	pH	«խիստոզան+դիատոմիտ» (գ/100 մլ)	Խիստոզան	Դիատոմիտ
1	0.2	3.85	1.3	3.66	0.20	2.0	3.84
2	0.4	3.89	2.0	3.67	0.30	2.0	3.84
3	1.0	4.82	6.0	3.66	0.66	2.0	4.13
4	2.0	5.56			1.00	2.0	4.36
Սուուղիչ (աղոտոր)	-	3.73		3.73			3.73

Ինչպես Երևան է այսուսակ 3-ից, սեղանի անապակ կարմիր գինենյութերի ակտիվ թթվությունը սորբենստների ազդեցությամբ փոփոխվում է: Խիտոզանով մշակման դեպքում թՀ-ը փոքր-ինչ բարձրանում է՝ 0,16-ով 0,4 գ/100 մլ դեպքում, իսկ դիատոմիտով՝ իջնում է 0,06-ով, «խիտոզան 0,3 գ+ դիատոմիտ 2,0 գ» համակարգով մշակման դեպքում թՀ-ը բարձրանում է 0,11-ով, իսկ «խիտոզան 0,66 գ + դիատոմիտ 2,0 գ» համակարգով մշակման դեպքում թՀ-ը բարձրանում է 0,4-ով: Ակտիվ թթվության բարձրացումը կառելի է բացատրել խիտոզանի հիմնային հատկությամբ: Պղտոր գինենյութերի պարզեցման համար կիրաւակած խիտոզանը պարզեցնում է գինենյութերը և, միաժամանակ, բացասական ազդեցություն չի թողնում դրանց զգայորոշման և ֆիզիկաքիմիական ցուցանիշների վրա (այսուսակ 4): Տ. Մամետնաբիկը<sup>4</sup> նույնպես գինեների զգայորոշման ցուցանիշների վրա խիտոզանի ազդեցության վերաբերյալ նմանատիպ եղակացության է հանգել:

Կախված ուսումնասիրվող սորբենտների քանակական հարաբերակցությունից (խիտողան + գինենյութ, դիաստոմիտ + գինենյութ, «խիտողան + դիաստոմիտ» համակարգ + գինենյութ)՝ որոշվել են նաև բոլոր նմուշների ֆիզիկա-քիմիական ցուցանիշներից էթիլ սպիրտի զանգվածային բաժինը /GОСТ 32095-2013/, տիտրվող թթվությունը /GОСТ 32114-2013/, ցնողող թթուների քանակը /GОСТ 13193-73/, անվտանգության ցուցանիշները՝ թունավոր տարրերի քանակը և մանրէ աբանական ցուցանիշները, դրանք համեմատվել են ստուգիչ նմուշի և նորմատիվային փաստաթղթի պահանջների հետ:

Փորձարկումներից պարզվել է, որ սեղանի անապակ սպիտակ և սեղանի անապակ կարմիր պղտոր գինենյութերի պղտորության աստիճանի հջեցման համար նշանակած կայունացուցիչներից առավել արդյունավետ է բնական կենսաբանական սպառությունը:

Հետազոտված սորբենալերը, ըստ գինենյութերի պղտորության նվազման հատկության, կարելի է դասավորել հետևյալ շարքով՝

Խիստողան → «խիստողան + դիաստոմիտ» → դիաստոմիտ:

<sup>4</sup> Стю Маметнабиев Т.Э., Деметаллизация вин хитинсодержащими сорбентами и биосорбентами на их основе. Автореф. дис. канд. хим. наук, 2005.

Սորբենտներով մշակված սպիտակ և կարմիր գինենյութերի (ընտրված արդյունավետ տարրերականեր) ֆիզիկաքիմիական ցուցանիշները ներկայացված են աղյուսակ 4-ում:

#### Աղյուսակ 4

##### **Սորբենտներով մշակված սպիտակ և կարմիր գինենյութերի, ստուգիչ նմուշների նորմավորվող ֆիզիկաքիմիական ցուցանիշներն ըստ ԳՕՍ 32030-2013-ի<sup>5</sup>**

N	Արտադրամքի անվանումը և մշակումը	Փաստացի պարունակությունը		
		Էթիլ սպիրտ, ծավալ (%)	Միտրվող թթվայինում (գ/հմ <sup>3</sup> )	ցնդող թթուներ (գ/լմ <sup>3</sup> )
1	Խիտոզանով մշակված սպիտակ գինենյութ (0.4 գ խիտոզան + 100 մլ գինենյութ)	12,3	3,8	0,42
2	Դիատոմիտով մշակված սպիտակ գինենյութ (6.0 գ դիատոմիտ + 100 մլ գինենյութ)	12,3	5,7	0,48
3	«Խիտոզան + դիատոմիտ» համակարգով մշակված սպիտակ գինենյութ (0.66 գ խիտոզան + 2.0 գ դիատոմիտ + 100 մլ գինենյութ)	12,3	3.9	0,48
4	Խիտոզանով մշակված կարմիր գինենյութ (0.4 գ խիտոզան + 100 մլ գինենյութ)	11,9	4,5	0,60
5	Դիատոմիտով մշակված կարմիր գինենյութ (6.0 գ դիատոմիտ + 100 մլ գինենյութ)	11,9	5,6	0,60
6	«Խիտոզան + դիատոմիտ» համակարգով մշակված կարմիր գինենյութ (0.66 գ խիտոզան + 2.0 գ դիատոմիտ + 100 մլ գինենյութ)	11,9	4.5	0,78
7	Ստուգիչ (պղտոր) սպիտակ գինենյութ	12,3	5,9	0,48
8	Ստուգիչ (պղտոր) կարմիր գինենյութ	11,9	5,9	0,78
ԳՕՍ 32030-2013		8.0-16.0	5.0-8.0	1.5-ից ոչ ավելի

Աղյուսակ 5-ում ներկայացված տվյալներից երևում է, որ մշակված բոլոր նմուշները էթիլ սպիրտի և ցնդող թթուների ցուցանիշներով համապատասխանում են ՆՓ ներկայացվող պահանջներին: Սակայն սորբենտներով մշակման արդյունքում նվազել է սպիտակ գինիների տիտրվող թթվությունը. այսպես՝ փոքր-ինչ նվազել է խիտոզան և «խիտոզան + դիատոմիտ» համակարգով մշակված գինենյութի տիտրվող թթվությունը: Շատ ցածր տիտրվող թթվությունը կարող է ազդել գինու համային հատկությունների վրա:

Սորբենտներով մշակված սպիտակ և կարմիր գինենյութերի ու չմշակված պղտոր գինենյութերի անվտանգության ցուցանիշներից մանրէաբանական հետազոտության արդյունքները ներկայացված են աղյուսակ 5-ում, իսկ թունավոր տարրերինը՝ աղյուսակ 6-ում:

Ըստ աղյուսակ 5-ի տվյալների՝ սպիտակ և կարմիր պղտոր գինենյութերի՝ խիտոզանով մշակման արդյունքում նվազել է կաթնաթթվային և քացախաթթվային բակտերիաների, ինչպես նաև շաքարասպան հատկությամբ: Այսպիսով՝ մանրէաբանական հետազոտության տվյալներից պարզվեց, որ խիտոզանով գինիների մշակման արդյունքում բարձրանում է գինենյութի կայունության աստիճանը:

<sup>5</sup> Տես ԳОСТ 32030-2013. Вина столовые и виноматериалы столовые. Общие технические условия.

### Աղյուսակ 5

**Սորբենտներով մշակված սպիտակ և կարմիր գինենյութերի մանրէաբանական  
հետազոտության արդյունքները**

N	Արտադրանքի անվանումը և մշակումը	Փաստացի պարունակությունը		
		Չարա- ռասմներ	Կաթնաթթվային բակտերիամեր	Քացախսաթթվային բակտերիամեր
1	Խիտոզանով մշակված սպիտակ գինենյութ (0.4 գ խիտոզան + 100 մլ գինենյութ)	թիչ	Եզակի	-
2	Դիատոմիտով մշակված սպիտակ գինենյութ (6.0 գ դիատոմիտ + 100 մլ գինենյութ)	-	Եզակի	-
3	«Խիտոզան + դիատոմիտ» համակարգով մշակված սպիտակ գինենյութ (0.66 գ խիտոզան + 2.0 գ դիատոմիտ + 100 մլ գինենյութ)	-	Եզակի	-
4	Խիտոզանով մշակված կարմիր գինենյութ (0.4 գ խիտոզան + 100 մլ գինենյութ)	-	միջին	-
5	Դիատոմիտով մշակված կարմիր գինենյութ (6.0 գ դիատոմիտ + 100 մլ գինենյութ)	-	բարձր	-
6	«Խիտոզան + դիատոմիտ» համակարգով մշակված կարմիր գինենյութ (0.66 գ խիտոզան + 2.0 գ դիատոմիտ + 100 մլ գինենյութ)	-	Եզակի	-
7	Սոուփիչ (պղտոր) սպիտակ գինենյութ	միջինից բարձր	միջին	Եզակի
8	Սոուփիչ (պղտոր) կարմիր գինենյութ	-	միջինից բարձր	-

Ինչպես երևում է աղյուսակ 6-ից, խիտոզանով մշակված նմուշների մեջ իջել են կապարի և կաղմիումի քանակները՝ սոուփիչ նմուշների համեմատությամբ, որը կարելի է բացատրել նրանով, որ մետաղների իոնները, խելատային կապերով միանալով բազմաթենողային բաղադրիչներին, առաջանաւում են դժվարալույթ մետաղաբազմաթենողային-սպիտակուցային կոմպլեքսներ։ Հարկ է նշել նաև, որ խիտոզանով մշակված նմուշները թունավոր տարրերի պարունակությամբ բավարարում են ՍՍ ՏԿ N21/11 նորմատիվային փաստաթղթի պահանջները։

### Աղյուսակ 6

**Թունավոր տարրերի պարունակությունը պղտոր և խիտոզանով մշակված  
սպիտակ և կարմիր գինենյութերում**

Արտադրանքի անվանումը	Թունավոր տարրեր (մգ/կգ)			
	Pb	Cd	As	Hg
Սպիտակ գինենյութ, սոուփիչ-պղտոր	0.05	0,002	2/h	2/h
Խիտոզանով մշակված սպիտակ գինենյութ (0.4 գ խիտոզան + 100 մլ գինենյութ)	0.03	0,001	2/h	2/h
Կարմիր գինենյութ, սոուփիչ-պղտոր	0,02	0,001	2/h	2/h
Խիտոզանով մշակված կարմիր գինենյութ (0.4 գ խիտոզան + 100 մլ գինենյութ)	0,01	2/h	2/h	2/h
Նորմն ըստ ՍՍ ՏԿ N 21/11 (մգ/կգ)	0.5	0.03	0.2	0.02

<sup>6</sup> Տես Բալոյիկո Գ.Գ., Զինչենկո Վ.Ի., Մեխյզլա հ.Ա., նշվ. աշխ.:

**Օգլափորձված գրականություն**

1. Валуйко Г.Г., Зинченко В.И., Мехузла Н.А., Стабилизация виноградных вин. Симферополь, “Таврида”, 2002.
2. Самвелян А.М., К вопросам улучшения качества виноградных вин. Дис. на д. тех. наук. Тбилиси, 1974.
3. Рибера-Гайон Ж., Пейно Э., Сюдро П., Теория и практика виноделия. М., 1981.
4. Эбелашвили Н.В., Влияние термической обработки мезги на фенольные вещества крепленых розовых вин. “Виноделие и виноградарство”, № 5, 2005.
5. Нянкова Г.Г., Маметнабиев Т.Э., Новый сорбент для вин. “Ликероводочное производство и виноделие”, № 8, 2005.
6. Маметнабиев Т.Э., Деметаллизация вин хитинсодержащими сорбентами и биосорбентами на их основе. Автореф. дис. канд. хим. наук, 2005.
8. ГОСТ 32030-2013. Вина столовые и виноматериалы столовые. Общие технические условия.

**СИЛЬВА САГРАДЯН**

*Профессор кафедры коммерции и бизнеса АГЭУ,  
доктор технических наук*

**АННА АРУТЮНЯН**

*Аспирант НАУА*

**РОМИК АРУТЮНЯН**

*Профессор кафедры неорганической и аналитической химии ЕГУ,  
доктор химических наук*

**Совершенствование технологии виноградных сухих вин с новым натуральным сорбентом.**— Исследовано влияние сорбентов : хитозана, диатомита и системы “хитозан + диатомит” на качество, безвредность и стабильность мутных виноматериалов. Выяснено, что натуральный биополимер хитозан, обладая высокими сорбционными свойствами, снижает мутность виноматериала, количество тяжелых металлов /кадмия и свинца/, не изменяя органолептические свойства виноматериалов. Данные микробиологических исследований показывают, что в разработанных хитозаном образцах мутных виноматериалов после разработки снижается количество молочнокислых и уксуснокислых бактерий, что способствует стабильности вина. Хитозан, по сравнению с диатомитом, имеет ряд преимуществ и можно использовать для увеличения прозрачности мутных виноматериалов. Так как хитозан дорогостоящий, по сравнению с диатомитом, для этой цели более целесообразно использование системы “хитозан + диатомит”.

**Ключевые слова:** мутное вино, хитозан, диатомит, качество, безвредность, стабильность.

JEL: Y8, Y80, Y9

**SILVA SAHRADYAN**

*Professor at the Chair of Commerce and Business at ASUE,  
Doctor of Technical Sciences*

**ANNA HARUTYUNYAN**

*Post-graduate at the ANAU*

**ROMIK HARUTYUNYAN**

*Professor at the Chair of Nonorganic and  
Analytical Chemistry at YSU, Doctor of Chemical Sciences*

**Improving the Technology of Grape Dry Wines with new Natural Sorbent.**— We explored the impact of chitosan, diatomite and the system "chitosan + diatomite" on the quality, safety and stability of turbid grape wine materials. It is shown, that natural biopolymer chitosan, possessing high sorption properties, reduces turbidity of wine materials, quantity of heavy metals /cadmium and lead/, without changing the organoleptic

properties of wine materials. The microbiological examination of turbid wine materials that had or had not been processed by using sorbents (e.g. yeast, lactic acid and acetic acid bacteria) revealed that when wine materials were processed with chitosan which had strong antibacterial properties, the amount of bacteria in wine materials decreased, increasing wine stability. The biopolymer chitosan turned out to have more privileges than diatomite. Therefore, it can be used for the clarification and stabilization of turbid wine materials. It can also be used for increasing their quality. Considering the privileges of these sorbents, and the fact that chitosan is more expensive than diatomite, it is more effective to use the combination of chitosan and diatomite (that is, the system "chitosan + diatomite") for the stabilization of wine materials.

**Key Words:** *turbid grape wine, chitosan, diatomite, quality, safety, stability.*

JEL: Y8, Y80, Y9